



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**9 մարտի 2015 թվականի N Մ-193-Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-134-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի փետրվարի 25-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (բուսական յուղ՝ 2,160 տեղ, 20,217.6 կգ ընդհանուր քաշով, 64,593.28 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բերի բաշխման ցանկ

ինվ. 0678-19.02.2015

N N	Ապրանքի անվանումը	Համառոտները ըստ մարզերի	Համառոտների քանակը	Սահմանափակումները (կգ)	Սահմանափակումները (կգ)	Արժեքը ըստ վաճառքների (ԱՄՆ-ի դոլար)
1	Բուսական յուղ	Գեղարքունիքի մարզ	74	Չեղելի	299	1,103
		Արմավիրի մարզ	164	Այլուտ	662	2,444
		Կոտայքի մարզ	73	Մարտունի	295	1,088
		Լոռու մարզ	81	Ուրարական	327	1,207
		Տավուշի մարզ	188	Կահան	759	2,801
		Երևան	23	Կապական	93	343
			6	Բարեպատ	24	89
			31	Չորազանք	125	462
			22	Սնուրամեջ	89	328
			61	Չավար	246	909
			81	Թբուշուր	327	1,207
		Արտասար	51	Արտասար	206	760
		Վեդի	17	Վեդի	69	253
		Արտաշատ	16	Արտաշատ	65	238
		Չետազատ	39	Չետազատ	157	581
		Մրզանոշ	16	Մրզանոշ	65	238
		Չարենցավան	13	Չարենցավան	52	194
		Սևաբերդ	41	Սևաբերդ	165	611
		Չորադրոյր	18	Չորադրոյր	73	268
		Արտաշատ	38	Արտաշատ	153	566
		Կանաչի	48	Կանաչի	194	715
		Կոնյուկ	15	Կոնյուկ	61	224
		Իջևան	16	Իջևան	73	268
		Երևան	3201	Երևան	12917	47,695
			4335		17496	64,593

**«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից**

**Հ. Ղազարյան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**9 մարտի 2015 թվականի N Մ-194-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-134-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՇՄԱՆ ՄԱՍԻՆ N 1  
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի 2-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (մակարոնային արտադրանք՝ 1,900 տեղ, 19,600 կգ ընդհանուր քաշով, 43,080 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժտանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիցի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Բերի բաշխման ցանկ**

Ինվոյս 0737 26.02.2015

ԱՆ	Նվաճման անվանումը	Հաստատմանը ըստ մարզերի	Հաստատմանը ըստ բաշխվող քանակը (կգ)	Կրճեղ ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար)
1	Մակարոնային արտադրանք	Գեղարքունի մարզ	74	735
		Արմավիր	324	1,630
		Կոտայք	719	725
		Լոռու	320	805
		Սյունիք	355	1,868
		Վայոց ձոր	824	229
		Կապան	101	60
		Բարեպատ	26	308
		Չորակամք	31	219
		Սևուրամեջ	96	606
		Շապուհ	61	805
		Թբիլիսի	81	507
		Արտաշատ	223	169
		Վերի	74	159
		Արտաշատ	16	388
		Գեղարքունի	70	171
		Մրցանուշ	39	70
		Մրցանուշ	16	159
		Չարենցավան	13	57
		Սևաբերդ	41	180
		Չորաղբյուր	18	79
		Արավան	38	167
		Վանանդ	48	210
		Դիլիջան	15	477
		Իջևան	66	149
		Իջևան	79	179
		Իջևան	18	31,808
		ԸՆԴՀԱՆՈՒՄ	3201	43,080
		ԸՆԴՀԱՆՈՒՄ	4335	19,000

Հ. Ղազարյան



«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կրիստոսոբն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

9 մարտի 2015 թվականի N Մ-195-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄ-  
ԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-  
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի 6-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված լուսային սարքավորումները (մեկ տեղ, 85 կգ ընդհանուր քաշով, 2,824.05 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 89,600 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա և 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱ



Ա. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 մարտի 2015 թվականի N Մ-196-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի 9-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Բարեգործական որակելի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված ականջակալների, պլանշետների, սպորտային ժամացույցների և դյուրակիր համակարգիչների (13 տեղ, 227 կգ ընդհանուր քաշով, 24,149 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 600 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծման և Հայաստանի շախմատի ակադեմիային անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**


**10 մարտի 2015 թվականի N Մ-197-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1  
(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի 9-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված արհեստական գորգասալիկները՝ 169,500 ՄԱԷ-ի դիրհամին համարժեք դրամ արժողությամբ և ավտոմատ լվացող և մաքրող սարքերը՝ 3,590 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ (11 տեղ, 6,040 կգ ընդհանուր քաշով, փոխադրման ծախսերը կազմել են 3,010 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՍ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա և փետրվարի 25-ի N Մ-153-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումով սահմանված պարկեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ա. ՄԵՆՍԻՍԻՆ  


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2015 թվականի N Մ-198-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2  
(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի  
9-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներ-  
կայացուցչության կողմից ձեռք բերված մալուխները (մեկ տեղ, 460 կգ ընդհանուր քաշով,  
9,891.45 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,300  
ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապե-  
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011  
թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի  
ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միու-  
թյան երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաս-  
տատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013  
թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի  
18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա և  
փետրվարի 25-ի N Մ-153-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումով սահմանվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 մարտի 2015 թվականի N Մ-199-Ա  
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
Մ Ա Ս Ի Ն**


---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի 9-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Բարեգործական որակելի ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (60 տեղ, 456.5 կգ ընդհանուր քաշով, 20,984 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 մարտի 2015 թվականի N Մ-200-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի 10-ի համաձայնեցման թերթը, որ ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված լուսավորության սարքավորումները և դրանց ամրակայման մասերը (42 տեղ, 4,533 կգ ընդհանուր քաշով, 177,423.29 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 14,107 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա և փետրվարի 25-ի N Մ-153-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-201-Ա  
քաղ. երևան**

**«ՖՐԱՆՍ - ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏԿԱ-  
ՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/24447-14 և 2015 թվականի մարտի 3-ի N 06/18-4/4618-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 19-ի N ԱՄ/22.2/13597-13 եզրակացությունները, որոշում է.*

1. Բարեգործական որակելի Ֆրանսիայի «Հայ-Ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Գորիսի նորակառույց սրտաբանական կենտրոնի համար «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բժշկական նշանակության ապրանքների, սարքավորումների, գործիքների և կահույքի (662 տեղ, 4,662 կգ ընդհանուր քաշով, 37,954 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,060 ԱՄՆ-ի դոլար, «Սյունիքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2015 թվականի N Մ-202-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-  
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի մարտի 4-ի N 07/80-2/4916-15 և մարտի 4-ի N 06/18-4/4944-15 եզրակացու-  
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետր-  
վարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հար-  
դարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատ-  
ված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակ-  
ներում՝


1) օդորակիչ սարքավորումներ և դրանց ամրակայման մասեր՝ 8 տեղ, 2,291.76 կգ ընդհանուր քաշով, 27,849.64 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ.

2) օդորակիչ սարքավորումներ՝ մեկ տեղ, 253 կգ ընդհանուր քաշով, 4,234 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ.

3) օդորակիչ սարքավորումների մասեր՝ մեկ տեղ, 54 կգ ընդհանուր քաշով, 3,494.40 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-  
ություն:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ Մ Ա Ն**

**13 մարտի 2015 թվականի N Ա-203-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՒՆ-  
ՄԻ 19-Ի N Ա-648-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/23803-14 և 2015 թվականի փետրվարի 26-ի N 06/18-4/4207-14 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Ա-648-Ա որոշմանը կից ծրագիրը (2014 թվականի մարտի 14-ի N Ա-172-Ա որոշման խմբագրությամբ) շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության կողմից, ԱՄՆ-ի Հայկական օգնության և զարգացման ասոցիացիայի (ARDA) միջոցով, «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (763 տեղ, 11,636 կգ ընդհանուր քաշով, 26,596 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,028 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԿԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Հ Ա Ս Ս Ս Ս Վ Ա Ս Ս Է

«Յանգ լայֆ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Ա. Ասատրյանի կողմից

**«Փյունիկ» ամառային ճամբար» ծրագիր**

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ Կոստայի մարզի Փյունիկ խամայնքում երիտասարդական ճամբարի կազմակերպում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Անկյակվում է բարեգործի խրախուսում և նախաձեռնվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, սուղիների, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպություն:
4.	Ծրագիրը կատարողը	«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (քաղ. Երևան, Մալաթիա-Մեքսատիա 16 փող. (Շահումյան), ՀՎՀՀ՝ 01255848):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Կոստայի մարզ, Փյունիկ խամայնք:
6.	Ծրագրի բյուջեն	2,030,460,400 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ և ԼՂՀ կարիքավոր ընտանիքների երեխաներ, խնամքի հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնամքով զբաղվող պետական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների շահառուներ, որոնց համար ճամբարի ծախսերունները անվճար են լինելու:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, աներաժեշտ ֆինանսական միջոցների ծախսը	<ul style="list-style-type: none"> <li>- ճամբարի խամար տարածքի ձեռքբերում, տարածքի մաքրում և շին. աշխատանքների նախապատրաստում, կոմունիկացիաների, կամուրջի, տանիքների, 1-ին ննջարանային մասնաշենքի և լողաբանների վերակառուցում, տրանսպորտային միջոցների, ցուպատնետակալ և այլ տեխնիկայի ձեռքբերում, ներմուծում, նոր խոհանոցի և ճաշարանի կառուցում և կառավորում հուլիս 2013 թվական - հուլիս 2016 թվական - 1.037,520,400 դրամ,</li> <li>- Ննջարանային 2-րդ մասնաշենքի, արպիկերատարային մասնաշենքի, մարզարկայինի և կամունիկացիաների նոր օգների կառուցում, խոհանոցային գույքի ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2016 թվական - հոկտեմբեր 2018 թվական - 946,200,000 դրամ,</li> <li>- Ամառային և սեզոնային ճամբարների կազմակերպում տարեկան 2880 երեխա - 2014 - 2019 թթ. - 29,520,000 դրամ</li> </ul>

3/5.17



22 Գոտայքի մարզի Փյունիկ համայնքում գոյություն ունեցող կիսավեր ճամբարի ձեռքբերում՝ 2013 թվականի մայիս-հուլիս - 139,400,000 դրամ,

Ճամբարի կառուցապատման և հիմնանորոգման աշխատանքներ՝

1-ին փուլ.

վնասված կառույցների քանդում, տարածքի մաքրում, կոմունիկացիոն համակարգերի վերակառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2013 թվական- հուլիս 2016 թվական - 95,450,000 դրամ,

- նախկինում գոյություն ունեցող՝ ավերված կամուրջի վերակառուցում՝ հուլիս - նոյեմբեր 2013 թվական - 92,820,400 դրամ
- մասնաշենքերի տանիքների վերանորոգում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2013 թվական- հուլիս 2015 թվական - 124,500,000 դրամ,
- ճաշարանի և խոհանոցի նոր մասնաշենքի կառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2013 թվական - հուլիս 2016 թվական-244,850,000 դրամ,
- ճաշարանի և խոհանոցի կահավորում՝ հուլիս 2014 թվական - հուլիս 2016 թվական - 103,750,000 դրամ,
- ննջարանային 1-ին մասնաշենքի հիմնանորոգում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2013 թվական - հուլիս 2016 թվական - 144,000,000 դրամ,
- լոգարանների հիմնանորոգում՝ հուլիս 2013 թվական-հուլիս 2016 թվական - 42,400,000 դրամ,
- ձյուն մաքրող, խոտհնձիչ, հող մշակող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2013 թվական- հուլիս 2016 թվական - 31,750,000 դրամ,
- ռադիոհեռագրային, կինոսրահի և այլ կենցաղային տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հուլիս 2013 թվական- հուլիս 2016 թվական-18,600,000 դրամ,

2- փուլ.

- ննջարանային 2-րդ մասնաշենքի կառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հունիս 2016 թվական- հոկտեմբեր 2018 թվական - 228,250,000 դրամ,
- նոր աղմիսխտրատիվ մասնաշենքի կառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հունիս 2016 թվական- հոկտեմբեր 2018 թվական - 415,000,000 դրամ,
- խոհանոցային գույքի ձեռքբերում և ներմուծում՝ օգոստոս 2016 թվական - դեկտեմբեր 2018 թվական - 20,750,000 դրամ,
- մարզադահլիճի կառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ և կահավորում՝ հունիս 2016 թվական - հոկտեմբեր 2018 թվական-103,750,000 դրամ,


3/5/12

3-րդ փուլ.


- հանդիսությունների դահլիճի կառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հունիս 2017 թվական - հոկտեմբեր 2018 թվական - 145,250,000 դրամ,
- կոմունիկացիոն նոր հանգույցների համակարգերի կառուցում, շինակյութի, շինարարական գործիքների, տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում՝ հունիս 2017 թվական- հոկտեմբեր 2018 թվական - 33,200,000 դրամ

Ճամբարների կազմակերպում

- Ամառային ճամբարի կազմակերպում՝ տարեկան 1800 երեխա - 2015 - 2019 թթ. - 18,450,000 դրամ
- Սեզոնային ճամբարի կազմակերպում՝ տարեկան ինն ամիս, յուրաքանչյուր ամսվա երկու հանգստյան օրերին՝ տարեկան 1080 երեխա - 2015 - 2019 թթ. - 11,070,000 դրամ




11.	Շրագրի իրականացման հետ կապված կազմակերպ. ծախսերը	17,220,000 դրամ, այդ թվում՝ կոմունալ ծախսեր-9,054,000 դրամ, ծրագրի առդիտի ծախսեր - 3,000,000 դրամ, գրասենյակային գույք, ծախսեր-1,549,800 դրամ, ապահովագրության, պահպանության և սպասարկման ծախսեր-2,512,000 դրամ, այլ ծախսեր-1,104,200 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմ-երի հետ	Հայաստանի Հանրապետության զիջության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սոցիալական տարածության նախարարություն, Գոտայքի մարզպետարան:
13.	Շրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ ներկայացվող հաշվետվություններ և «Ցանց լայն» կազմակերպչականության հոգաբարձուների խորհրդի անդամների սլարդերական այցելությունների միջոցով:



3/5/12

«Յանկ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N ՄՄ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ստացված բեռի ցանկ

	Ապրանքի անվանում	Քանակ	Ընդհանուր քաշ (կգ)	Արժեք (ԱՄՆ-ի դոլար)
1.	Աթոռներ մետաղյա հիմքով, կտորե երեսամասով	394	3,579	4,984
2.	Բոքսի տանձիկ	76	79	13
3.	Օգտագործված հագուստ և սպիտակեղեն	165 կգ	176	143
4.	Մև մետաղյա խողովակներ քառակուսի հատումով՝ ոչ ցինկապատ	23 միավոր	2,723	2,300
5.	Մև մետաղյա խողովակներ կլոր հատումով՝ ոչ ցինկապատ	17 միավոր	1,133	6,000
6.	Ձեռքի մեխանիկական գործիքների հավաքածու	105 փաթեթ	545	7,227
7.	Մև մետաղյա հարմարանք հաշմանդամների համար (զուգարանակոնքի ամրացվող հենակներ)	60 հատ	50	450
8.	Պլաստմասսե զոֆրո խողովակներ	37 հատ	375	3,850
9.	ՕՏԵ-ից թերթեր ոչ լամինացված	85 միավոր 2.45 մ3	2,044	734
10.	ՄՂՏ-ից թերթեր ոչ լամինացված	25 միավոր 72 մ2	850	830
11.	Բիտումային տանիքածածկ թաղանթ՝ գլանափաթեթով	3 փաթեթ 30 մ2	82	65
<b>Ընդամենը</b>		<b>763 տեղ</b>	<b>11,636 կգ</b>	<b>26,596</b>
<b>Փոխադրման ծախսեր</b>				<b>6,028</b>



3/5.11



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-204-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1**


(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 9-ի N 07/80-2/5206-15 և մարտի 3-ի N 06/3-3/4767-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղդամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա և փետրվարի 25-ի N Մ-153-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2015 թվականի փետրվարի 24-ին կնքված՝ N SM001/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 5,587,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱԿ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-205-Ա  
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2**

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 9-ի N 07/80-2/5201-15 և մարտի 3-ի N 06/3-3/4773-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղդամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա և փետրվարի 25-ի N Մ-153-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետալ-դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2015 թվականի հունվարի 16-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է չժանգոտվող մետաղից շրիշակների պատրաստման և վերելակների դռների երեսապատման աշխատանքների իրականացում՝ 7,540,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-206-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1  
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**


---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի մարտի 4-ի N 07/80-2/4922-15 և մարտի 2-ի N 06/3-3/4432-15 եզրակացու-  
թյունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-  
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմ-  
նադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսություն-  
ների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում»  
ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի  
N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա  
որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի  
նշանակություն՝

«Գրիման» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230486) 2015 թվականի փետրվարի 10-ին կնքված  
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտերկրից հակահրդեհային  
անվտանգության համակարգի սարքավորումների ձեռքբերման և «Տաշիր» բարեգործական  
հիմնադրամի անունով ներկրման ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով,  
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն:

ՆԱԽԱԳԱՀ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-207-Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2  
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 4-ի N 07/80-2/4921-15 և մարտի 2-ի N 06/3-3/4459-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրիման» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230486) 2015 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակահրդեհային անվտանգության համակարգի սարքավորումների տեղադրում՝ 8,359,760 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2015 թվականի N Մ-208-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի մարտի 4-ի N 07/80-2/4923-15 և մարտի 4-ի N 06/3-3/4813-15 եզրակացու-  
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-  
թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-  
ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էլլիպս ՋիԷյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2015 թվականի փետրվարի 3-ին կնքված՝ N 1TM/T պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվտանգու-  
թյան համակարգի սարքավորումների մատակարարում և տեղադրում՝ 10,087,553 դրամի  
չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մեհրաբյան և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239171) 2015 թվականի փետր-  
վարի 12-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարա-  
րական նյութերի մատակարարում՝ 3,375,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի  
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-209-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿ-  
ՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 3-ի N 482Է-ՑԵ60-Շ840-15 և փետրվարի 12-ի N 06/3-3/2758-15 եզրակացությունները, որոշում է:*

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-681-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N 10148, սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 000869, 2012 թվականի մայիսի 16-ին կնքված՝ N 000137 և 2014 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 390621 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ ամսական 1,998,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայրուսգազարդ» («Գազպրոմ Արմենիա») ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 018.08.13.2952 և օգոստոսի 1-ին կնքված՝ N 03308134962 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2015

թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում քնական գազի մատակարարում՝ 1,800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված՝ N 112750683 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 27,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված՝ N 113293923 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 5,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2011 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N 1491847 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 90,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2014 թվականի մարտի 11-ին կնքված՝ N 2682296 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական ինտերնետ կապի ծառայությունների մատուցում՝ ամսական 10,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2013 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված՝ N J414-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 19 լիտր և 12 լիտր տարողությամբ տարաներով խմելու ջրի մատակարարում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ԳԻԼԱՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02602113) 2015 թվականի հունվարի 23-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների հարակից սարքերի և պարագաների ու ծրագրերի մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Մույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 մարտի 2015 թվականի N Մ-210-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿ-  
ՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1  
(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 3-ի N 482Է-ՑԵ60-ՇԾ40-15 և փետրվարի 16-ի N 06/3-3/3088-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-681-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Իքս-Արթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237555) 2015 թվականի փետրվարի 3-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների, հարակից սարքերի և պարագաների մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պիկո-վիկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00871025) 2015 թվականի հունվարի 27-ին կնքված՝ N 03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային պարագաների և գրենական պիտույքների մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱՌԴ Գյուրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533008) 2015 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է այցեքարտերի, ցուցատախտակների, պաստառների, պիտակների և այլ պարագաների պատրաստում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01809336) 2015 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թունաքիմիկատների, գյուղատնտեսական գործիքների, գյուղատնտեսական մեքենաների, սերմերի և այլ գյուղատնտեսական ապրանքների մատակարարում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.


5) «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝ ամսական 420,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Խասա-խազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01546394) 2015 թվականի հունվարի 27-ին կնքված՝ N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տնտեսական և կենցաղային ապրանքների մատակարարում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Ձեթ Իքս գարած» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02701398) 2015 թվականի հունվարի 27-ին կնքված՝ N 08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվաղողերի ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2015 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենայի պահեստամասերի և քսուկների ձեռքբերում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2015 թվականի N Մ-211-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿ-  
ՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 2  
(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 23-ի N 07/80-2/3870-15 և փետրվարի 18-ի N 06/3-3/3394-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-681-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետևանքում հրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2015 թվականի փետրվարի 6-ին կնքված՝ N Ե-427 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 79,402 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01516105) 2015 թվականի փետրվարի 11-ին կնքված՝ N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների, հարակից սարքերի, պարագաների և ծրագրերի մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2015 թվականի N Մ-212-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի մարտի 9-ի N 07/80-2/5200-15 և մարտի 3-ի N 06/3-3/4774-15 եզրակացու-  
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-  
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-  
